№ 43 ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ 12 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1894 № 43

ԱԹԱՋԻՆ ՏԱՐԻ

ՇԱՒԻՂ

ԱԹԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„ՇԱՒԻՂԸ“ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 30 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» Տարեկան գինը 10 ղրան, կէս տարուանը 6 ղրան: Առանձին համարները 5 շահի. Արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 ռուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբլի: Թէհրանում գրւում են միմիայն, խմբագրատան մէջ: Մեր հասցէն. Téhéran Rédaction CHAVIGH.

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է առաւօտեան 8—4 ժամը: Կիւրակէ եւ տօն օրերը 10—2 ժամը: Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բաւին 1 շահի:

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1895 Թ.

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ „ՇԱՒԻՂ“ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„Շաւիղը“ կը հրատարակուի Թէհրանում (մօտաւորապէս կրկին մեծութեամբ) նոյն ծրագրով և նոյն ուղղութեամբ: „Շաւիղի“ բաժանորդագինն է մէկ թուման, կէս տարուանը վեց ղրան: Արտասահմանում՝ 3 ռուբլի կամ 8 ֆրանկ. կէս տարուանը 2 ռուբլի կամ 4 ֆրանկ:

Արտասահմանից դրամական ծրարները կարող են ուղարկել հետևեալ հասցէով. Черезъ Баку Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. А. Бекъ-Назарову. Իսկ նամակներ և թղթակցութիւններ հետևեալ հասցէով. Téhéran Rédaction „CHAVIGH“.

Դավրէժում ցանկացողները կարող են գրուիլ Բաղդասար Մելիք Սարգսեանցի մօտ, Սալմաստում Յովհաննէս Այրէսեանցի մօտ, արտաբիլում՝ Յակոբ Էլչիբեկեանի մօտ, Նոր-Զուղայում՝ Յովսէփ Բարսեղեանցի մօտ, Բուշիրում՝ պ. Կ. Զէյթունեան մօտ, Մարաղայում՝ Մելքոն Խալափեանցի մօտ, Ռաշտում՝ Ալէքսան Յովսէփեանցի մօտ:

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունւում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Մեզանից անկախ» պատճառներ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թէհրանի օր. դպրոցի մասին. Նամակ Դավրէժից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. — Բանասիրական Փաշտակարան կամ Ղարաղաղ գաւառը.

«ՄԵԶԱՆԻՑ ԱՆԿԱԽ» ՊԱՏՃԱՌՆԵՐ

Գուցէ շատերը սկսեն ալժմ զարմանալ թէ ինչու „Շաւիղը“ այս կամ այն խնդրի մասին ոչ մի տող չէ նուիրում, նրանց մասին չէ յիշատակում անգամ և կարծես թէ օտար են իրան համար հայի կեանքի մէջ ծնող կարևոր երևոյթները:

Հայկական կեանքի մէջ ամեն տեղ, մանաւանդ Հայաստանում, տեղի է ունենում կարևոր պատմական յառաջախադացութիւն, որի մասին չէ լռում և ոչ մի հայ թերթ. խօսում են օտար թերթերն իսկ և ահա միակ լռութիւն պահպանողը „Շաւիղն“ է, որ մինչև իսկ չէ անում „Հայրենիքի“ և կամ „Արևելքի“ զանազան „աւազակների“ մասին արած նկարագրութիւնները:

Դեռ մինչև իսկ „Շաւիղից“ աւելի քան այդ են սպասում. նրան ամբաստանում են անտարբերութեան և այլների մէջ:

Այո, այդ բոլորը իրաւացի են: „Շաւիղը“ լուռ է մնացել, որովհետև պարտաւորուած է այդպէս անել: Թող հաւաստի լինին բոլորը, որ նա իւր կարգին ունի „իրանից անկախ“ պատճառները, նա պարտաւորուած է զսպել իրան շատ և շատ բանի մասին գրելուց և հարկադրուած է աւելի մեծ „իրանից անկախ“ պատճառների առջև գլուխ ծռել, քան Կովկասի թերթերը:

Դրա համար էլ թող մեր ընթերցողները ոչ զայրանան և ոչ էլ մեղադրեն „Շաւիղին“: Նա կանէ այն, ինչ որ իրաւունք է տրուած իրան և չի մոռանալ անել այն ինչ որ կարող է և երբ որ կարող է:

Դրա փոխարէն „Շաւիղը“ կաշխատէ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՓԱՑՏԱԿԱՐԱՆ ԿԱՄ ՂԱՐԱԴԱՂ

(Շարունակութիւն 38 թուից)

Հովուի ասածը ճիշդ էր, ղարաղաղցիք այդպէս էին վերաբերւում ողանցիք, դէպի այդ աղբիւրի պատճառաւ. եւ բայց այնպէս արեւի տաքութեան պատճառով չը կարողացայ զսպել իմ ծարաւը եւ իմ ջուրը խմելու պատիւն ունեցայ:

Մենք Ողանից Քլալա հասանք:

Քլալան ընկած է մի փոքրիկ լեռան ստորոտում. երկ կողմը դաշտ ու անտառ է, որոնց մի ջից բղխում են սառն աղբիւրակները:

Քլալան ունի 20 տուն, որոնք պարապւում, են նոյնպէս երկրագործութեամբ, բայց տաղջիններից այն առաւելութեամբ, որ սորա մասամբ ցանում են եւ բրինձ, իսկ առաջինները ոչ:

Ունին մի անշուք եկեղեցի մի քահանայով, այդ քահանան բոլորովին զուրկ է քահանայական արժանաւորութիւնից:

Այստեղ մի օր մնալուց յետ գնացինք Կարմանաւ:

Կարմանաւը ընկած է երկու լեռան միջի փոքրիկ հովիտում այս գիւղը չափազանց քարքարուտ է եւ երկրագործութեան անյարմար, բայց եւ այնպէս գիւղացիք ուրիշ պարապմունք չունենալով երկրագործութեամբ են պարապւում եւ մասամբ էլ շերամապահութեամբ:

Կարմանաւը բաղկացած է 25 տնից, որոնք ունին մի եկեղեցի առաջիններից աւելի անշուք ունին մի քահանայ տէր Ներսէս անուամբ. սա մի քաջ եւ պարթեւահասակ մարդ է. ուսման կողմից զրէթէ հաւասար է Սարդուի տեր Միքայէլին. բայց այս կողմերի քահանաների մէջ առաջին տեղն է բռնում:

Կարմանաւն էլ իւր հարեւան գիւղերի պէս զուրկ է վարժարանից:

Կարմանաւից մենք ճանապարհուեցանք դէպի Միքիտի գիւղ. որքան գնում էինք դէպի արեւելք այնքան էլ մեր առջեւը բացւում էին դաշտեր. այլ եւս չկային Տիղմառի բարձր լեռները ու խոր ձորերը այլ դաշտեր էին՝ որոնք մեծ մասամբ անտառապատ էին:

Կարմանաւից հասանք Միքիտի չորս ժամում:

Միքիտիին Ղարաղաղի ամենաքիչուոր գիւղն է բաղկացած 4 տնից, որոնք պարապւում են երկրագործութեամբ. այս չորս տնուորների նիւթական վիճակը բաւական լաւ է. այն պատճառով որ գիւղի բոլոր արդիւնքը մնում է չորս տնուորներին մինչդեռ միւս գիւղերինը շատ լինելով բաւականութիւն չէ տալիս: Սոքա էլ, ունին շատոնց շինուած եկեղեցի: Գիւղի չորս կողմերի աւերակները ցոյցեն տալիս որ Միքիտին երբեմն շատ տնուոր է ունեցել:

Մենք առաւօտեան շուտ Միքիտուց դուրս գալով կէս օրին 2 ժամ անց հասանք Նեփեշա գիւղը:

Օրը կիրակի էր. գիւղի մի տան առաջի կտուրի վերայ հաւաքուած էր ամբողջ գիւղի բազմութիւնը. մենք գիւղի մօտից տեսնելով այդ բազմութեանը ուղղակի այնտեղ գնացինք երկու մարդ մէջքի վերայ գետին ծռած եւ ոտքները բարձր փայտի վրա

գոնէ շօփափել իւր իրաւունքների սահմաններում եղող հարցերը խիստ խղճմտանքօրէն—էլի որքան որ կարողէ—խօսել նրանց մասին, բացարձակապէս յայտարարելով, որ խօսելու է միմիայն ճշմարտութիւնը։

Նա ոչ մի կերպով չի շեղուիլ ճշմարտութիւնից։ Նրան ոչ ոք չէ ստիպում սուտ խօսել կամ կեղծը ասել, ճշմարտութեան հակառակ գրել, եթէ նա չը կարողանայ միմիայն ճշգրիտը ասել, սաւթիւնը երբէք չէ ասելու։ Զեռընպահ մնալու սովորութիւնը նա չի ունենալ այնպիսի խնդիրների մէջ, ուր նրան թոյլատրուած է իր քուէն դնելու։ Եւ նա անկեղծօրէն կը դնէ իր քուէն։

„Ճշմարտութիւնն ասա եթէ կարող ես, իսկ եթէ ոչ—լռիր առ այժմ և մի խօսիր սուտը“ այդ կը լինի նրա նշանաբանը։

Դրանով էլ միմիայն կառաջնորդուի նա, խնդրելով իւր ընթերցողներից տէրի առջև ունենալ „Շաւղի“ „իրանից անկախ“ պատճառների գոյութիւնը։

Կրկնում ենք, ուր մեզ թոյլատրուած է մեր քուէն կը տանք միմիայն ճշմարտութեան համար և անխնայ ոտնատակ տալով կը տրորենք ստութիւնն ու քծնութիւնը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Նամակ Դավրէժից

—

27 Հոկտ. 1894

Մեր խաւարամիտների թափած ամեն ճիգուջանքը անցաւ ապարդիւն վերջապէս։ Բերդաթաղի տեսչի պայմանագիրը ստորագրուեցաւ՝ հակառակ խաւարամիտների կազմած պլանի և կանոնագրութեան։

Քանի գնում է, հոգաբարձութեան նախագահը (սրբազան առաջնորդը) զինում է իւր դէմ իւր պաշտօնակիցներին, նորանց իրաւունքները բռնաբարելով։ Այնպէս որ՝ վերջին հոգաբարձական ժողովներում, նախագահը բաւական անելանելի դրութեան մէջ է ընկել երբ վերջինները սկսել են պաշտպանել իրանց իրաւունքները և խնդրել նախագահից, որ ուրիշ անգամ առանց հոգաբարձական ժողովների, նախագահը իրանթոյլ չտայ հրամաններ արձակելու իւրեանց հովանաւորութեան տակ գտնուած ուսումնարանների և ուսուցիչների վերաբերութեամբ ինչպէս լսում ենք, նախագահը խոստացել է այդ անել, որով սարսափելի զայրացրել է կոնսիստորիայի ինքնակոչ քարտուղարին—խաւարամիտ բռնակի ներկայացուցչին։ Վերջապէս Բերթաթաղի հոգաբարձութիւնը ճանաչել է իրանց և ուսուցիչների մէջ ինտրիգա ձգողին, որը այժմս մինչև անգամ ուսումնարանում իւր կարծիքով, կօնտրոլէորի դեր է կատարում։ Մի բան, որ պ. քարտուղարին պահում է—դա իւր խնամական և ընկերական կապերն է, որի շնորհիւ, պարոնը, դեռ երեսատեղ ունի դէս սա դէն գնալու և խօսելու, թէ չէ մինչև հիմայ հարիւր անգամ բուրդը զզուած կը լինէր։ Անտանելի է նորա դրութիւնը, որովհետև իւր պաշտպան հոգաբարձուներն անգամ այսօր համարձակւում են, իրան պաշտպան նախագահի գործունէութիւնը քննադատել, այնպէս որ պ. քարտուղարը գլուխը կորցրած՝ չըգիտէ իւր անելիքը։ Լիլաւան՝ որին ամեն տեսնող ասում էր՝ ապագան Լիլաւայինն է—այսօր առանց տատանուելու կարելի է ասել՝ „դեռ հարց է“, քանի որ, Լիլաւայի ներկայ հոգաբարձութիւնը իւր անձնական հաշիւները և կռիւները աւելի բարձր է դասում, քան թէ իրան յանձնուած ուսումնարանների գործը։ Գնաց մեռաւ էլ չի կենդանանայ այն յոյսը, որ ունէր Լիլաւայի անմեղ և պարզահաւատ ժողովուրդը։ Այսօր, Լիլաւայի հոգաբարձութիւնը դառել է մի մարդու ձեռքում խաղալիք որը առանց կարմրելու իւր՝ անցեալ ժողովներում կայացրած խնդիրները լուծում է ըստ կամաց և հաճոյից։ Ազգասակցական կռիւները քանի գնում են սուր կերպարանք են ստանում մեր մէջ։

Տ.

ԹԷՀՐԱՆԻ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ։

(Օր. Թ. Վարդանեանի նամակի առիթով)

—

„Շաւիղի“ անցեալ համարում տրպուած թէհրանցի մի օրիորդի նամակը առիթ է տալիս մեզ մի քանի խօսք ասելու մեր իգական սեռի կրթութեան գործի մասին

Կանանց կրթութեան գործը նոյնքան կարեւոր է և աւելի իսկ կարեւոր քան տղամարդկանցը։ Լաւ մայրերն են, որոնք լաւ սերունդ են յառաջացնում։ Ժառանգական յատկութիւններին ոչ միայն ֆիզիքական է փոխանցւում, այլ և մտաւորականը. բացի դրանից, մօր կրթուած լինիլը իւր որդու համար նոյնքան օգտակար է, որքան ուսման մի ամբողջ ընթացք և յաճախ իսկ աւելին։

Այսպիսի տարրական ճշմարտութիւնները ջատագովելու հարկից կարծեմ ազատ է արդէն նոյն իսկ հասարակ բարոյախօսը, այժմ չէ կարող լինել մէկը—բացի մի քանի կանգ առած և կամ փտած ուղեղներից—որ իգական սեռի կրթութեան դէմ առարկութիւն ունենալու չափ անմիտ լինի։

Զը նայելով որ կանանց կրթութեան մեծ կարեւորութիւնը գիտէ գուցէ իւրաքանչիւրը մեր մէջ (որպէս և այլ այնպիսի ճշմարտութիւններ, որոնց միայն գիտենալը բաւական է համարւում) և սակայն նոյն իսկ ամենազարգացած անձը՝ աւելի պատրաստականութիւն է յայտնում կենտրոնացնելու իւր ոյժը միմիայն

կապած էին. երկու մարդ երկար ճիպոտները ձեռքերները առած անգործաբար ծեծում էին խեղճերի ոտները։

Ժողովրդի բազմութիւնը շրջապատել էր դոցա բայց կարծես ոչ ոք չէր համարձակւում խօսելու. ժողովրդից հեռու մի բարձր տեղ նստած էր մի կարճահասակ մարդ եւ երբեմն էլ կոչում էր, լաւ խփեցէք։

Ով էր այդ մարդը կամ ինչու թակել էր տալիս դոցա ես չըգիտէի։

Գիւղացիք ինձ տեսնելով՝ խնդրեցին, որպէս միջնորդեմ Քէշիշխանիսատ որ ազատէ թակուողներին։ Ես մօտեցայ Քէշիշխանի ձեռքը համբուրեցի խընդրելով որ ազատէ խեղճերին. Քէշիշխանը ընդունեց խնդիրս։ միայն իւրաքանչիւրից մի քանի թուման կաշառք առնելով։

Թակողները նոյն դիւղից էին միմիանց մօտ ունեցած արտի սահմանի վերայ կռուելով, արժանացել էին այդ պատժին։

Քէշիշխանը Նէփիշտի Տէր Գրիգորն էր. որ սրբազան Մխիթարեանից ստացել էր Մեշափարա եւ Մինջվան գաւառակների կառավարութիւնը եւ դորա համար էլ ստացել էր Քէշիշ-խան անունը։ Մենք Նեփէշտ գնալուց 2 ամիս յետոյ վախճանւում է տէր Գրիգորը։

Նեփէշտը ընկած է մի տափարակ տեղ. որից փոքր ինչ հեռու կան փոքրիկ լիռներ ու ձորեր, որոնց միջով հոսում են սառն աղբիւրակներից կազմուած առուակները։

Ունի 20 տուն, որոնք ունին մի եկեղեցի, դըժբաղդարար քահանան վախճանուած լինելով չափազանց նեղութիւն են կրում գիւղացիք, ինչպէս միւս գիւղերը, որոնք առանց քահանայ են։

Նեփէշտը զուրկ է եւ ուսումնարանից, այս մասին շատ խօսեցայ հանդուցեալ տէր Գրիգորի հետ, որի իշխանութեան տակ էր երկու գաւառակները։

Ես տէր հօրն ասում էի. «քանի որ այս գաւառակները թուրք խաներից ու բէկերից ազատուած են եւ այժմ կառավարւում են հայ կառավարիչներով, մանաւանդ որ դուք ինքներդ էք կառավարիչը, ինչու չըպէտքէ ուշ դարձնէք ուսման վերայ, որ ամենահրաժեշտն է եւ այս երկու գաւառակների միջում մի վարժարան բացուի, որով թէ դուք օգտուած կըլինէք եւ թէ ձեր որդիքը կուսանէին ու կը կրթուէին»։

Տէր հայրն իմ ասածներին պատասխանում էր այնպէս, ինչպէս որ Աղաղանում պատասխանեց Տէր Յովսեփիմը թէ «ժողովուրդը աղքատ է չէ կարող ուսման վերայ ուշ դարձնել»։

Տէր Գրիգորը կամ այնպէս էր հաւատացած կամ թէ ուզում էր մեր առջեւ իր ժողովրդին չունեւոր ցոյց տալ։

Ընդհակառակը մենք այս կողմի գիւղացիներին թեպէտեւ ոչ շատ հարուստ տեսանք, բայց եւ այնպէս այն դրութեան մէջ էլ չէին, որ չըկարողանային ուսման վերայ ուշ դարձնել կամ թէ մի վարժարան բանալու նիւթական ոյժը չունենային։ Ոչ, տէր հօր ասածը սխալ էր այլ գիւղացիք կարօտ էին մի առաջնորդի, որ միշտ խօսէր ու հասկացնէր գիւղացւոց եւ նոքա պատրաստ կըլինէին ամեն բանով

արական սեռի վերայ։ Իգական սեռի մասին մտածում է „ի միջի այլոց“, նրա գոյության վերայ հոգացում է միմիայն այն ժամանակ, երբ արական սեռի մասին գործ դրած ոյժից մի բան „աւելորդ“ մնացած լինի „զոհելու։“ Իգական սեռը, կինը, կեանքի շատ պայմաններում առանց էն էլ զրկուած ստրկացած, նեղուած ու ճնշուած մասն է կազմում, Մարդկային ընկերութեան այդ կէսը նկատուած է մեր մէջ որպէս պարիա, զուրկ ամեն իրաւունքներից, զուրկ տղամարդու վայելած ամեն տեսակ առանձնաշնորհութիւններից, նրկատուած է որպէս միմիայն տնային գործերի, զաւակ ծնելու և սնուցանելու ընդունակ անձ, եթէ չասեմ դեռ միմիայն հաճոյքի ապարկայ համարուած և հարստահարուած որպէս մի աւելի ստոր արարած քան տղամարդը։ Այդ բաւական չէ դեռ, նորա առջև են ձգում ուսումը որպէս տղամարդի ճոխ սեղանից աւելացած „փշրանք“, ոլորտ մի սև փող մուրացիկին, ողորմութիւն՝ անօթիին։

Ընդունենք մի քիչ, որ կինը ոչինչի պէտք չէ եթէ ոչ ի թիւս տալոց, նաև զաւակ սնուցանելու։ Ի նկատի պէտք է ունենալ, որ զաւակ սնուցանել չէ նշանակում նորան ծիծ տալ, կերակրել, լուալ ու մաքրել, հագցնել և քնացնել։ Սնուցանել բառի հետ առնչակցապէս (corrélativement) կապուած է նաև դաստիարակելու, կրթելու միտքը։

Այդ հիման վերայ իսկ կանանց կրթութեանգործը մեզ ներկայանում է որպէս ամենակարեւոր մի գործ, որի վերայ արժէր լրջօրէն ուշադրութիւն դարձնել։

Այստեղ մի համեմատութիւն հարկաւոր է անել, ցոյց տալու համար թէ տղամարդիկ որքան անմիտ են որ կանանց կրթութեան վերայ ուշադրութիւն չը դարձնելով ոչ միայն մնասում են կանանց, ուշացնում են նրանց բարձրանալու, տղամարդկանց հաւասարելու ժամանակը, այլ և անհունապէս վնասում են իրանք իրանց։

Նա, ով ուսումնասիրել է փորը ինչ գործարանական կեանքը Թէհրանում և կամ Բագուի-մէջ—ուր կան հայ դոր գործարանատէրեր, հայ կապիտալիստներ. այն անձը, որ նոյն իսկ Թէհրանում եղող հայ վաճառականների կամ գործատէրերի դէպի իրանց գործաւորներն ու գործակատարներն ունեցած վարմունքն ու յարաբերութիւններն փաքը ի շատէ ուսումնասիրել է, նա անշուշտ նկատած կը լինի այն տմարդութիւնը որին ենթարկուած են այդ խեղճ աշխատաւորները։

Բացի այն, որ այդ կապիտալիստը ոչ մի քաղցր խօսք չունի իւր գործաւորի հասցէ, այլ և դիշեր ցերեկ հնարներ է մտածում աւելի ևս շահագործելու նորա „ստիպեալ“ ստրկական խոնարհութիւնը։ Եթէ բնակարանը ինքն է տալիս—տուածնէ մի շան բոյն, խոնաւ, աղտեղի և դարշահոտութեամբ վարակուած. եթէ ճաշը իրանցն է, այդ ճաշը ոչնչով չէ զանազանւում Թէհրանի կաթոլիկների կամ բողոքականների օր. դպրոցների տուած ճաշերից, որոնք անմարսողութեան և հիւանդութեան բարեկամներ են։ Այդպէս են հայ աղաները, նորանք նմանում են այն վայրենուն, որ ղտած լինելով մի աղբիւր, այնքան և այնպէս ենխմում նորանից, որ մի անգամով չորացնում են նորան։

Եւ նա, որ դուրանից ետոյ տեսել է մի եւրոպացի կապիտալիստի դէպի իւր գործաւորներն ունեցած յարաբերութիւնները և նորա վերայ տարած հոգսերը, նկատած կը լինի թէ այդ հեռատես շահագործողը որպիսի քաղցրութեամբ գործածում է իւր աշխատաւորներին, եթէ գործարան ունի, ստեղծում է գործաւորի համար. յարմար բնակարան, նոյն իսկ զարգացութեան միջոցներ, մասնաւորապէս կանանց կրթոյքները լրացնելու հանգամանքներ. հիմնում է գործարանի մէջ գրատուն, կլուբ և նոյն իսկ ուսումնարան։

Այդ, փա է երկուսից այն, որ աւելի շատ շահ կունենայ. չէ որ եւրոպացի կապիտալիստը աւելի քիչ և խնայողաբար է գործածում իւր գործաւորին, նորա լաւ կենցաղավարութեան համար մեծ ծախսեր է անում, մինչ հայ կապիտալիսաը այմեն ջանք ի գործ է դնում հնարել միջոց իւր գործաւորի ծծած օդն իսկ խլելու և իւր գրպանները ուռեցնելու համար։

Ուրեմն եւրոպացի կապիտալիստն է որ անմիտն է։ Ոչ երբէք։ Անմիտը նա չէ որ մի գրաստի բանեցնում է շատ և մի օրուայ մէջ նրան ոչնչացնում։

Առաջինը իւր եկամուտի աղբիւրը մշտականի է վերածում, թէև քիչ քիչ. իսկ երկրորդը ցամաքեցնում է նրան վայրենու պէս։

Եւ ահա կրթութեան գործի մէջ էլ հայ տղամարդը իւր նոյնատեսակ անմիտ յատկութիւնովն է որ ներկայանում է մեզ։ Նա ընդունելով կինը ստրպէս գերբաստ, իւր բոլոր ոյժը ի գործ է դնում արական սեռի կրթութեան՝ վերայ, իսկ կանացի սեռը իբր գրաստ գործածւում այնքան, որ յառաջացնում է նրանից այլասերուած (dégénéré) մի հասարակութիւն, այդ այլասերուած հասարակութեան, որին իրաւունք և կրթութիւն է տուած միմիայն հլու—հպատակ լինելու, ստրկական զգացմունքներով ղեկավարուելու, որին „կանգնեցնում են օջախի առաջ, մի նորածին երեխայ են տալիս նրա գիրկը, ստիպում են որ ամեն վարկեան նրանցով միայն զբաղուի. մի՛ վայրկեան ազատ ժամանակ չեն տալիս“ *) և ասա պահանջում են որ կինը լաւ մայր

*) Բէբէլի «La femme» գրքից։

ուսումնասիրան բանալու համար։

Մենք ատ վերջացրած համարելով Մեշչպիսրի դիւղերը ճանապարհուեցանք դէպի Մինջուան գաւառակի Վինան դիւղը, որ չորս ժամուայ ճանապարհ է։

Զ.

ՄԻՆՋՈՒԱՆ.

Նախիջևանից հասայ Վինան։

Վինանը Մինջուանի հայ գիւղերի մէջ պատմանշանաւորն է, ինչպէս Տիզմառում Խանազահը եւ Մեշափարում Մզկիթը։

Սա էլ ունեցել է նշանաւոր մզիթներ, որոնց մէջ նշանաւորն է եղել Մելիք Մուշկամբարը որի սերունդը այժմ էլ բնակւում է Վինանում Մելիք Մուշկամբարեան ազգանունով։

Այս դիւղի բնակիչները բաւական ուժեղ բնդակաղմ եւ բաց մարդիկ են, բոլորը հրացանաւոր եւ շատ վարժ են հրացանամղութեան, նոյնպէս եւ ձիավարութեան մէջ։

Վինանը ունի 24 տուն, որոնք ունին մի քարաշէն եկեղեցի, որ շինուած է մօտ 10 տարի առաջ հանգուցեալ Մահտեսի Գրիգորի ջանքերով, որը Ղարաբաղից լաւ որմնադիր բերել տալով շինել տուած է։ Գիւղից 1 վերստ վերեւ լեռան լանջի վերայ շինուած է մի այլ եկեղեցի Ս. Յովհաննէս անուամբ, այս էլ Զիւժի Ս. Գէորգայ եկեղեցու պէս մեծ ուխտատեղի է, որը լինում է ամեն ժամանակ։

Վինանը 7 տարի առաջ ունեցել է մի ուսուցիչ եւ վարժարան, որի տեւողութիւնը երեք տարի է եղել այժմ փակ է։

Մի տօն օր էր, բոլոր վինեցիք գնացել էին Ս. Յովհաննէսի եկեղեցում մոմ վառելու եւ աղօթելու դոցա հետ կար եւ Գալի տէր Բնդղասարը։

Ս. Յովհաննէսի եկեղեցին ուխտկելու սովորութիւնը ունենալով՝ ես էլ գիւղացոց մէջի հետ դիմեցի դէպի այնտեղ։

Մենք դեռ եկեղեցին չը հասած դեռուից տեսանք որ եկեղեցուառաջը մի փոքր խարոյկ է վառւում եւ այս ու այն կողմից դրքեր են նետում այդ խարոյկի մէջ, որոնք այրուելով մոխիր են դառնում։

Փոքր ինչ հեռու մի քանիսը մարդու մէկին բռնած Քակում էին անգթաբար. ժողովրդի աղմկալի ծայները թնդացնում էին լեռները. ինչ էր այդ կամ ինչ էրպատճառը չը գիտէինք մենք։

Երբ հասանք, հարցրինք այդ մասին. գիւղացիներից մէկը պատասխանեց մեզ հետեւեալ խօսքերով։

Էն մարդը որ գալիս Քակում մինչանի օր առաջ եկաւ մեր շէնը. մեր աղ սորին պատիւը տուաւ. կասէր Աստուծու դոնաղա, ինքն ալ մին երկու գիր փէշքէշա տուաւ մեր տղորդը. ասար եկայա կեղեցէն. մեր որ ծոնդր ըբ լալ դրելիս ես խաչքը լալ հնրլիս երեսնիս նա եշում էր մեզ եւ ծիծղիս, ետոյ կեղեցուն անէ դուս էր եկալ. բոխվան հրցրաւ Ես «Էբրալալ ինդիրրլիս, մեզ վերայ ծծրղլիս» նա էլ սկսեց մեզ վերայ խօսել թէ «Ձեր արածը սխալ էղաւ ալէլ էք ձեր դրերը փիս գիրքն. մեր ալ բռնալոր իրան Քակալ։

(Կը շարունակուի)

գառնայ որ լաւ որդէ ծնի։ Այդպիսի մայրական հասարակութիւնը ինչպէս կուզենայիք որ առաջ չը բերէր մի հետզհետէ գեղեցիկութեան ձգող ու սառաքարշ սարկային բնաւորութեան համայնք, որ ոչ միայն մտաւորական ոսղունային քըծնութեան տէր լիներ, այլ և դէպի օրգանական սորութեան և բարոյական անկման հակուէր...

Այդ ապագայն է որ պարսկահայը ունի իւր առջև և դա է, որը նա—կուրացած—տեսնել չէ կարողանում, թէև մի փոքր ի շատէ զննող աչք, առաջին հայեացքով դրան լիովին վերահասու լինելու անընդունակ չի լինիլ։

(Կը շարունակուի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Հաստատ աղբիւրներից տեղեկանում ենք որ Պարսկաստանի եւ Հնդկաստանի ս. տոռաչնորդ Նսայի արք. եպիսկոպոսը բարեհաճել է նորից մի քանի չարվարներ քահանայ ձեռնադրել։ Շնորհաւորում ենք Սրբազանին իւր այդպիսի եռանդուն գործունէութեան համար։

—

Անգլիական դեսպանը անցեալ շաբաթ պատիւ ունեցաւ ներկայանալու Վ.Հ. Շահին։

—

Լսում ենք որ նորին գերազանցութիւնք Ամիրխան Սարդարը, Բ.Բրիմխան Միր-փէնջը եւ Էմիրշամը Սալթանէն ուղարկւում են իբր արտաքոյ կարգի դեսպանութիւն ի Պետերբուրգ Ռուսաց նոր Կայսրին շնորհաւորելու եւ ցուցակցութիւն յայտնելու հանգուցեալ Կայսեր մահուան համար։ Նրանց իբր թարգման ընկերանում է Յովհաննէս խան Մասեհեանը։

—

Օր. Թ. Վարդանեանի նամակը ունեցել է բաւական ազդեցութիւն, մեզ ուղղւում են ուրիշ նամակներ եւս, բայց Ներքիս ծաւալը թոյլ չէ տալիս նրանց տեղ տալ բոլորին։

—

Թէհրանի օրիորդաց գպրոցը, յաւելով պիտի նը. կատենք, որ այս տարի բացուելու միտք չէ ցոյց տալիս. հրաւիրում ենք ազգ. Հոգաբարձութեան լուրջ ուշադրութիւնը հոգալ այդ մեծ պակասութիւնը լրացնելու համար։

—

„Շաւիղի“ 41 թուում Ռուֆայէլ Թադէոսեանի նամակում, փոխանակ պ. Յովսէփ Թադէոսեանի միջոցով 220 դրան լինելու տպուել է 150 դ. եւ պ. Մովսէս Աւետիքեանի նուէրի դումարը 150 դ. բոլորովին մոռացուած է եղել տպուելու։

—

Նոր-Զուղայից մեզ գրում են հետեւեալը։ Նոյեմբերի 5.ին ժամը 4.ին այստեղ հասաւ Պարս. եւ Հնդ. Առաջնորդութեան յաջորդ Իսահակ ծ. վ. Այվատեանի, բաւական թուով ժողովուրդ ընդառաջ էր գնացել նորան գիմաւորելու։ Տէրութեան կողմից ուղարկուել էին 3 ետաք եւ 10 ֆէրրաշ։

—

Մեզանում, շատ տարածուած է, Ղզլարի ախտը, ամեն դասակարգի մէջ, խոհար, ծառայ, գնրծակ, վաճառական, գործակատար, օղեվաճառ, բոլորն էլ մեծաւմասամբ այդ ախտով են վարակուած։ Արդեօք աւելիլաւ չէր լինել եթէ մեր Ղզլարի հերոսները, փոխանակ իրանց ամբողջ ժամանակը նուիրելու բարոյականութիւնը մահացնող գործին, մի քանի ժամ էլ տկացնէին ընթերցանութեան. ուրեմն էլ ինչ նոստակի է ծառայում գրաղարան ընթերցարանը, որ լրագիրները գալիս եւ իրար վերայ դիզուած մնում են անօգուտ, իսկ գրքերը փոշում են չրկարդալուց։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Տոկիո 4 նոյեմբ. Համաձայն Ժապոնի պաշտօնական տեղեկագրին, Ժապոնական առաջին բանակը Ֆուն-Հունկ-Զինկին տիրել է և թէ Մահինլինկի մօտ հասնելուն պէս, չինացիք փախուստ են տուել։

—Փարիզ, 4 նոյեմբ. Ֆրանսիայի և Մատագասկարի միջև անկասկած պատերազմը տեղի կունենայ, որովհետև հաղորդուել է թէ Ֆրանսիական դեսպանը առանց սպասելու իւր տէրութեան եղած խնդիրների և դի մումների պատասխանը ստանալու, Մատագասկարի մայրաքաղաքից մեկնել է։

—Փարիզ, 7 նոյեմբ. Մատագասկարի տէրութիւնը, Ֆրանսիայի յայտնած պարտաւորութիւնները և պահանջները որ գրուած են եղել իւլտիմատում նամակի մէջ, մերժել է։ Ֆրանսիական այն զօրքը որ գնալու է Մատագասկարի վերայ պատերազմի, կազմուած են լինելու 12000 հոգուց։

Լոնդոն, 7 նոյեմբ. Մանչուրիայում ճակատամարտի վայրից հասած լուրերը հաղորդում են, որ Ժապոնական առաջին բանակը Եամակաթայի առաջնորդութեամբ Ֆունկ-Վանկ կոչուած վայրին տիրել են և այդ ամենակարևոր տեղն է, որ գտնւում է 100 միլ (անգ.) Մօքէդէնի հարաւային կողմը։ Ժապոնական զօրքը այդ կուում 55 թնդանօթ, 15000 հրացան և մեծ քանակութեամբ պատերազմական պիտոյքներ չինացիներից ձեռք են անցրել։ Ժապոնական զօրքի մօտենալուն պէս, չինացիք իւրեանց զէնքերը թափել և փախել են։ և այն լուրերը որ, կոմս Օեամայի հրամանատարութեամբ Ժապոնական երկրորդ բանակի մասին հասել են հաստատում են, որ Ժապոնական զօրքը չինացիների շատ քիչ դիմադրութիւնից յետոյ Քինչուին տիրել են և Թալին-Վանն էլ ամենասաստիկ ռմբակոծութիւնից յետոյ իշխանութեան տակ են առել։ Մանչուրայից հասած պատերազմի լուրերին նայելով, չինական զօրքը զօրավար Սունկի հրամանատարութեամբ, որ Ֆունկ-Վանկում յաղթուել էր, կապել է լեռնային անցքերը որ տանում է դէպի Պէկին, Ժապոնացիք ջանանում են իրանց դիրքը փոխել։

—Պէկին 7 նոյեմբ. Չինաց կառավարութիւնը պատրաստ է, որ Ժապոնական կառավարութեան հետ խաղաղութեան դաշն կապէ, այս պայմանով որ Կորէայի տեղական կառավարութիւնը չինաց կողմից անկախ հրատարակուի, և պատերազմական վնաս ինչ գումար էլ որ լինի որոշուածմի քանի մեծ պետութիւններից Չինաստանը կը վճարէ Ժապոնիային։

—Պետերբուրգ, 9 նոյեմբ. Ռուսաց հանգուցեալ կայսեր մարմինը չորեքշաբթի երեկոյեան կայսերական դղեակից փոխադրեցին Լիւադիայի եկեղեցին։ Նիկոլայ կայսրը, Վլադիմիր և Պավել մեծ դուքսերը, Անգլիոյ թագաժառանգը և կայսերական գերդաստանից շատ անդամներ կայսեր յուղարկաւորութեան ներկայ էին։

„ՇԱՒԻՂԻ“ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

Սպահան։ Նոր-Զուղայեցուն. Ձեր նամակը չի տպուի, որովհետև մենք հաստատ գիտենք որ Ազգ. Կեդր. դըպրոցում առարկաները աւանդւում են ոչ հայերէն լեզուով, որ ուղղակի հակամանկավարժական է։ Ինչ վերաբերում է նորան, որ դուք ասում էք թէ որովհետև դասագրքերի մեծ մասը թարգմանութիւն են, ուստի և „աւելի լաւէ“ բնագրի լեզուով աւանդել դասերը—դա ծիծաղելի է. չարժէ դրան պատասխանել։ Գրեցէք լուրջ թղթակցութիւններ, մի՞թէ ձեզ շրջապատող հասարակական կեանքի մասին ոչինչ չէք կարող ասել քան կրօնաւորներին փառաբանելը։ № 36-ի մէջ Նոր-Զուղայից „Դիտակ“ ստորագրութեամբ թղթակցի գրածին լիովին մենք համակրում ենք, իւր տուած փաստերը անհիմն են։

Մեր բոլոր թղթակիցներին։ Խնդրում ենք քիչ զբաղուիլ տէրտէրների կամ տիրացուների, այս ինչ մասնաւոր անձի կամ այն ինչ աղայի արածներով. դրանք ոչ ոքի չեն հետաքրքրում։ Գրեցէք ձեզ շրջապատող հասարակական երևոյթների մասին, գրեցէք գոնէ տեղական սովորութիւնների մասին. չէ՞ որ հետաքրքիր և գրելու նիւթեր շատ և շատ կան Պարսկաստանում։ Մի անգամ ընդ միշտ յայտարարում ենք, որ տիրացուական, կրօնական կամ տէրտէրական հարցերով զբաղուելու միտք չունինք։

Նոր-Զուղա։ „Դիտակ“-ին. Ինչո՞ւ չէք շարունակում ձեր խոստացած թղթակցութիւնները. շատ համակրանքով են կարդացւում ձեր նամակները։

Արտօնատէր—Հրատարակիչ՝
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ